«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ

«08» ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2023Թ. N 674-Լ

ՀՐԱՄԱՆ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 31-Ի ԹԻՎ 53-Լ ՀՐԱՄԱՆՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով՝ «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածը և ղեկավարվելով ՀՀ կառավարության 2002 թվականի նոյեմբերի 28-ի թիվ 1933-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ի կանոնադրության 28-րդ կետի «գ» և 29-րդ կետի «գ» ենթակետերով.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել «Հայաստանի Հանրապետության փորձագիտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության աշխատողների վարձատրության մասին կարգը և դրան կից աղյուսակը՝ համաձայն հավելված:

2. Ուժը կորցրած ճանաչել «Հայաստանի Հանրապետության փորձագիտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի 2017 թվականի մարտի 31-ի «Հայաստանի Հանրապետության փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ի աշխատողների վարձատրության կարգը հաստատելու մասին» թիվ 53-Լ հրամանը:

3. «Հայաստանի Հանրապետության փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ի Իրավական ապահովման և անձնակազմի կառավարման բաժնի պետ Էդուարդ Խաչատրյանին՝ իրազեկել «Հայաստանի Հանրապետության փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ի աշխատողներին սույն հրամանի վերաբերյալ:

4. «Հայաստանի Հանրապետության փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ի հանրային կապերի պատասխանատու Արփինե Ադամյանին ապահովել սույն հրամանի հրապարակումը կազմակերպության պաշտոնական ինտերնետային կայքէջում:

5. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում 2024 թվականի հունվարի 03-ից:

ՏՆՕՐԵՆ՝ Դ. ՂՈՒԼՅԱՆ

Հավելված
«Հայաստանի Հանրապետության փորձագիտական
կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի 2023 թվականի
դեկտեմբերի 08-ի N 674-Լ հրամանի

Կ Ա Ր Գ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով սահմանվում են «Հայաստանի Հանրապետության փորձագիտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության (այսուհետ՝ Կենտրոն) աշխատողների վարձատրության սկզբունքներն ու կարգը, կարգավորվում են նրանց հիմնական և լրացուցիչ աշխատավարձերի, պարգևատրման, դրամական օգնության տրամադրման և վարձատրության հետ կապված այլ հարաբերություններ:

2. Սույն կարգում օգտագործվող Հիմնական աշխատավարձ, Լրացուցիչ աշխատավարձ, Հավելում, Հավելավճար, Լրավճար, Պարգևատրում հիմնական հասկացությունները կիրառվում են ՀՀ աշխատանքային օրենսգրքով սահմանված իմաստներով:

2. 1. Գործակից՝ թվային մեծություն, որը կիրառվում է Կենտրոնի տնօրենի հիմնական աշխատավարձի չափով բազմապատկելու միջոցով՝ աշխատողների հիմնական աշխատավարձի չափի հաշվարկման նպատակով:

2. 2. Դրամական օգնություն՝ սույն կարգով նախատեսված դեպքերում և կարգով աշխատողին տրամադրվող վճար:

3. Կենտրոնի աշխատողների վարձատրության հիմնական սկզբունքները.

1) աշխատողի կատարած աշխատանքային պարտականություններին, պատասխանատվությանը համապատասխանող հիմնական աշխատավարձի ապահովումը,

2) աշխատողների վարձատրության չափերի հիմնավորված տարբերակման ապահովումը՝ ըստ զբաղեցրած պաշտոնի,

3) աշխատողի կատարած աշխատանքի և փորձառության համար համարժեք վարձատրությունը:

II.ՀԻՄՆԱԿԱՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՑԻՉ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԸ, ԱՇԽԱՏԱՎԱՐՁԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

4. Կենտրոնում աշխատող անձանց աշխատավարձը կազմված է սույն կարգով սահմանված հիմնական աշխատավարձից և լրացուցիչ աշխատավարձից:

5. Հիմնական աշխատավարձը.

1) հիմնական աշխատավարձի չափը հաշվարկվում է Կենտրոնի տնօրենի հիմնական աշխատավարձի և սույն կարգի թիվ 1 աղյուսակով սահմանված տվյալ պաշտոնի գործակցի արտադրյալի միջոցով,

2) Կենտրոնի ընթացիկ գործունեության արդյունքներով պայմանավորված հաստիքացուցակով սահմանված պաշտոնների գործակիցները կարող են փոփոխվել Կենտրոնի տնօրենի կողմից ընդունված իրավական ակտով,

3) ենթակա պաշտոն զբաղեցնող աշխատողին վերադաս պաշտոն զբաղեցնող աշխատողի պարտականությունների ժամանակավոր կատարում վերապահելու դեպքում, տվյալ պարտականությունների կատարման ժամանակահատվածում ենթակա պաշտոն զբաղեցնող աշխատողի հիմնական աշխատավարձի հաշվարկման համար հիմք է ընդունվում միայն վերադաս (առավել բարձր գործակից ունեցող) պաշտոն զբաղեցնող աշխատողի պաշտոնի համար սահմանված գործակիցը,

4) ոչ լրիվ աշխատաժամանակով աշխատանքի ընդունված աշխատողի աշխատավարձի չափը հաշվարկվում է ոչ լրիվ աշխատաժամանակին համամասնորեն՝ տվյալ պաշտոնի համար սահմանված հիմնական աշխատավարձից նվազեցնելու միջոցով, որի արդյունքում հիմնական աշխատավարձի չափը չի կարող գերազանցել սույն կարգի թիվ 1 աղյուսակով տվյալ պաշտոնի համար սահմանված պաշտոնային գործակցի 75 տոկոսը:

6. Լրացուցիչ աշխատավարձը.

1) լրացուցիչ աշխատավարձը հաշվարկվում է՝ հավելումների, հավելավճարի, պարգևատրման, լրավճարի ձևով,

2) Կենտրոնի աշխատողներին հավելում տրվում է ծանր, վնասակար կամ առանձնապես ծանր, առանձնապես վնասակար աշխատանք կատարելու և (կամ) արտաժամյա և (կամ) գիշերային աշխատանքների և (կամ) հանգստյան և օրենքով սահմանված ոչ աշխատանքային՝ տոնական և հիշատակի օրերին գործատուի հանձնարարությամբ կատարված աշխատանքների համար՝ առնվազն ՀՀ օրենսդրությամբ սահմանված նվազագույն չափերով,

3) գիտական աստիճանը հավաստող փաստաթղթերի ներկայացման դեպքում, Կենտրոնի աշխատողներին տրվում է հավելավճար՝

ա. գիտությունների թեկնածուի դեպքում՝ ամսական 5.000 ՀՀ դրամ գումարի չափով,

բ. գիտությունների դոկտորի դեպքում՝ ամսական 10.000 ՀՀ դրամ գումարի չափով:

7. Կենտրոնի աշխատողներին լրավճար կարող է տրամադրվել Կենտրոնի ընթացիկ գործունեության արդյունքներով պայմանավորված աշխատողներին խրախուսելու, նրանց սոցիալական վիճակը բարելավելու նպատակով Կենտրոնի տնօրենի կողմից ընդունված իրավական ակտով՝ Կենտրոնի ստորաբաժանումների կատարած աշխատանքի վերաբերյալ Կենտրոնի տնօրենի տեղակալի և գլխավոր հաշվապահի կողմից Կենտրոնի տնօրենին ներկայացված համատեղ գնահատման եզրակացության հանգամանքները ուսումնասիրելու արդյունքում՝ Կենտրոնի տնօրենի կողմից ընդունված իրավական ակտի հիման վրա: Միանվագ տրամադրվող լրավճարի չափը չի կարող գերազանցել աշխատողին ամսական վճարվող հիմնական աշխատավարձի չափը:

8. Կենտրոնի աշխատողներին պարգևատրում կարող է տրամադրվել առանձնակի բարդության փորձաքննությունը որակյալ կատարելու, աշխատանքային պարտականությունները գերազանց կատարելու, փորձագիտական պրակտիկայի կատարելագործմանն ուղղված մեթոդական աշխատանքներ կատարելու դեպքերում՝ աշխատողի անմիջական ղեկավարի կողմից Կենտրոնի տնօրենին ներկայացված գնահատման եզրակացության հանգամանքները ուսումնասիրելու արդյունքում՝ Կենտրոնի տնօրենի կողմից ընդունված իրավական ակտի հիման վրա: Միանվագ տրամադրվող պարգևատրման չափը չի կարող գերազանցել աշխատողին ամսական վճարվող հիմնական աշխատավարձի չափը:

9. Կենտրոնի աշխատողներին դրամական օգնություն կարող է տրամադրվել հետևյալ դեպքերում՝

1) աշխատողի ամուսնության,
2) աշխատողի ընտանիքում երեխայի ծննդյան,
3) տարերային աղետի հետևանքով աշխատողին վնաս պատճառելու,
4) աշխատողի կամ նրա ընտանիքի անդամի երկարատև հիվանդության,
5) աշխատողի ընտանիքի անդամի մահվան:

10. Դրամական օգնությունը տրամադրվում է աշխատողի կամ վերջինիս անմիջական ղեկավարի կողմից Կենտրոնի տնօրենին ներկայացված զեկուցագիրը և դրանում նշված հանգամանքները հիմնավորող փաստաթղթերը ուսումնասիրելու արդյունքում՝ Կենտրոնի տնօրենի կողմից ընդունված իրավական ակտի հիման վրա: Միանվագ տրամադրվող դրամական օգնության չափը չի կարող գերազանցել աշխատողին ամսական վճարվող հիմնական աշխատավարձի չափը:

11. Դրամական օգնությունը կարող է տրամադրվել նաև Կենտրոնի աշխատողի մահվան դեպքում նրա ընտանիքի անդամի դիմումի կամ անմիջական ղեկավարի կողմից Կենտրոնի տնօրենին ներկայացված զեկուցագրի հիման վրա, դրանում նշված հանգամանքները հիմնավորող փաստաթղթերը ուսումնասիրելու արդյունքում՝ Կենտրոնի տնօրենի կողմից ընդունված իրավական ակտի հիման վրա: Միանվագ տրամադրվող դրամական օգնության չափը չի կարող գերազանցել աշխատողին ամսական վճարվող հիմնական աշխատավարձի չափը:

	Պաշտոնի անվանումը	Գործակիցը	Աշխատավարձի չափը /ՀՀ դրամ/	Հավելում
1	Տնօրեն	1	804,000	
2	Տնօրենի տեղակալ	0.9	723,600	
3	Տնօրենի խորհրդական	0.584	469,536	
4	Տնօրենի օգնական	0.51	410,040	
5	Հանրային կապերի պատասխանատու	0.55	442,200	
6	Իրավական ապահովման և անձնակազմի կառավարման բաժնի պետ	0.72	578,880	
7	Ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ՝ գլխավոր հաշվապահ	0.72	578,880	
8	Գրասենյակի պետ	0.72	578,880	
9	Տնտեսական բաժնի պետ	0.72	578,880	
10	Փորձագիտական բաժնի պետ	0.78	627,120	
11	Իրավաբան	0.584	469,536	
12	Անձնակազմի կառավարման գծով իրավաբան	0.51	410,040	
13	Հաշվապահ	0.584	469,536	
14	Գնումները համակարգող	0.55	442,200	
15	Գրասենյակի մասնագետ	0.51	410,040	
16	Համակարգչային ադմինիստրատոր	0.5	402,000	

17	Վարորդ	0.32	257,280	
18	Պարետ	0.37	297,480	
19	Մաքրուհի	0.25	201,000	
20	Ավագ փորձագետ	0.63	506,520	
21	Փորձագետ	0.56	450,240	
22	Փորձագետ ստաժոր	0.375	301,500	
23	Փորձագիտական բաժնի գործավար	0.37	297,480	
24	Դատահոգեբուժական փորձաքննությունների բաժնի պետ	0.6	482,400	144,720
25	Դատահոգեբուժական փորձաքննությունների բաժնի ավագ փորձագետ	0.48	385,920	115,776
26	Դատահոգեբուժական փորձաքննությունների բաժնի փորձագետ	0.43	345,720	103,716